



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


2018թ. հոկտեմբերի 30-ին, N 117
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՀՆԱՔԵՐՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՎԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 03/10/15495-18 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Հնաքերղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել «Հնաքերղի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 26-ի N 170 - Ա որոշմամբ հաստատված «Հնաքերղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
«Հնաքերղի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հնաքերղի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Հնաքերղի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:
4. «Հնաքերղի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրականացնել փոփոխված կանոնադրության պետական գրանցումը:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Սիմոնյանի վրա:

Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 10/29/2018 18:31:17 GMT

Подписано: GEVORGYAN DAVIT 3204247

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

